Հրատարակ. Ցորիլենական Կարգադիր Յանձնաժողովի

Նոր-Ջուղայի ԱԶԳ. ԹԱՏՐՈՆԸ

1888 – 1913

25-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԻԼԵՆԻ ԱՌԹԻՒ

Խմբագրեց

ՅԻԳՐԱՆ Թ. ԱՐԳԱՐԵԱՆՑ



ՆՈՐ—ՋՈՒՂԱ.
Տպարան Ս.մենաֆրկչեան Ս. Վանաց
1913

PDF processed with CutePDF evaluation edition www.CutePDF.co

Նոր-Զուղայի ԱԶԳ. ԹԱՏՐՈՆԸ

1888 - 1913

25-ԱՄԵԱՅ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ԵՒԹԻ

Խմբագրեց

ՑՐԳՐԱՆ Թ. ԱԲԳԱՐԵԱՆՑ



ՆՈՐ—ԶՈՒՂԱ.
Տպարան Ամենափրկչեան Ս. Վանքաց
1913



ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ

ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԸ

1888 թուականն էր, ուղիղ 25 տարի առաջ, երբ Նոր—Ջուղայում շրջաբերում էր հետևեալ կոչը և հանգանակութիւն կատարուում հիմք դնելու մի ազգային թատրոնի։

«Յայտարարութիւն

« Առ ազգասէր հասարակութիւն Նոր—Ջուղայի։

« Նկատելով որ ինչպէս վարժարանն ամենայն ազգի « յառաջադիմութեան առաջին նպատակն է, նոյնպէս եւ « Թատրոնն իւր բազմօգուտ լաւութիւններով երիտասար- « դաց սրտերին վառ աշխոյժ և դալար մտքերին խրատա- « կան և կրթական դասեր տալով՝ նոցա բարոյականն կա- « նուայնէ ազնիւ ղգացմամբ և կրյորդորէ լուսաւորութեան « ճանապարհի վերայ կանոնաւոր քայլեր փոխելու։ Ահա այս « է պատճառն, որ լուսաւորեալն Եւրոպա ազգաց լուսաւո- « րութեան պայմաններից որպէս դպրոցն և լրագիրն՝ նոյն- « պէս և Թատրոնն յառաջադիմութեան նպատակ ճանաչած « է, թատրերգակ վիպասաններ քաջալերելով և նոցա անունն « և համբաւն աշխարհիս վերայ հռչակելով։ Ցիրաւի Ռուսա- « հայ և Տաճկահայ և մինչև անգամ Պարսկահայ միւս քաղաքաց « ազգայինք քաջ ուշիմութեամբ Եւրոպացւոց բարենպատակ « շաւղին հետևելով օրըստօրէ յառաջադիմում են արտակից « միաբանութեամբ և եռանդով։

« Բայց մեք Զուղայու հայ երիտասարդքս ևս որ
« նոցա ազգակից եմք, միթէ ամօթ է մեզ նոցա յառա-
« ջադիմական գործերին հետևիմք։ Ուստի մենք սոս-
« բագրեալ խոնարհ երիտասարդքս արդէն միացած փափագ
« ունիմք տեղս մի «Թատերական ակումբ» հաստատել, մի-
« միայն թէ Ձեր քաջալերութեանն և յորդորանաց եմք կա-
« րօտ, անխափան դուք պէտք է մեզ օգնէք ինչ եղանակաւ
« որ կարող էք, բայց ըստ որում նպատակ ունիմք առաջիկայ
« Ջատկական օրերում առաջին թատրոնն ներկայացնել տեղ-
« ւոյս Կեդրոնական դպրոցի հոյակապ Դահլիճում, ան-
« շուշտ կարևոր ծախք ևս պիտոյ է նախապատրաստութեան
« համար։ Ուստի սոյն յայտարարութիւնն Ձեր Ազգասիրա-
« կան զգայմանց ներկայացնելով խնդրում ենք զի բարե-
« հաճիք մեզ քաջալերել դրամական օգնութեամբ ևս»։

ի Նոր—Զուղա 1888 16—28 Մարտ ամի Տեառն

« Մէլքում Մարգարեան (տիրեն)
« Մայիլ Ս. Եսայեանց (գանձապահ)
« Յարութիւն Տէր Կարապետ (ատենադպիր)
« Պօղոս Զ. Մարտիրոսեան (խորհրդատու)
« Աստուածատուր Սարգսեան (,,) »։

Այսպիսով հանդանակւում է 551 ղուան և կազմւում է տիրողների մի խումբ, որ Ազգ. Կեդրոնական դպրոցի դահլիճումն մի շարժական բեմ է սարքում և նախնական կարիքները հոգալով մի քանի պատմական պիեսներ և վոդեվիլներ ներկայացնում։

Սիրողները հասարակութեանն աւելի ևս գրաւելու և ներկայացումները հետաքրքրական դարձնելու նպատակով, թերել են տալիս Կառավարութեան զինուորական երաժշտախումբը միջարարներին նուագելու։

1890 թուին ժամանում է Նոր—Զուղա նորընտիր թեմական առաջնորդ Եսայի արք-եպս. Ամատուածատրեանը, որ ի թիւս մի շարք բարեմասնութիւնների, ունենում է մի օտարոտի հայեացք, նա սկզբունքով դէմ է լինում թատրոնի, որով և պատճառ դառնում ներկայացման դադարման և յիշեալ խմբի քայքայման։

Եօթն երկար տարիներ այլևս ոչ մի ներկայացում տեղի չէ ունենում մինչև 1897 թուի սկզբները, երբ Ազգ. երկսեռ դպրոցների հոգաբարձական և ուսուցչական կազմը ձեռք է առնում նաև թատերական գործը և մի քանի ներկայացումներ տալիս յօգուտ նոյն դպրոցների։ Այս ժամանակաշրջանի թատրոնի յարատևութիւնը գլխաւորապէս կախուած է լինում նախ պ. Յովսէփ Ղազարեանից, ապա պ. Մկրտում Կարապետեանից։

1899 թուի Նոյեմբերի 11-ին մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ առաջին անգամ կազմուում է հետևեալ 16 յօդուածներից բաղկացած կանոնադրութեամբ մի մնայուն Թատերասիրաց Ընկերութիւն։

ա. Նոր-Ջուղայի Թատերասիրաց ընկերութեան նպատակն է կանոնաւոր և պարբերական ներկայացումներով նիւթապէս օգնել երկսեռ դպրոցներին և տեղական բարեգործական ընկերութիւններին։

բ. Թատերասիրաց խումբը պէտք է բաղկացած լինի երկու ժողովներից—ընդհանուր և վարչական։

գ. Բոլոր հիմնադիր անդամները համարուում են ընդհանուր ժողովի անդամներ։

դ. Ընդհանուր ժողովը պէտք է ունենայ առանձին նախագահ և քարտուղար, որոնք ընտրուում են կամ գաղտնի քուէարկութեամբ և կամ ձայնից առաւելութեամբ։

ե. Տարին երկու անգամ ընդհանուր ժողովը նիստ կունենայ քննելու վարչական ժողովի հաշիւները և գործունէութիւնը։

զ. Ընդհանուր ժողովը վարչութեան հաշիւները քննելու համար ընտրում է երկու անձինք, որոնք վեց ամիսը մի անգամ քննելով հաշիւները, ներկայացնելու են ընդհանուր ժողովին։

է. Ընդհանուր ժողովը թատերական գործերը վարելու համար ընտրում է վեց հոգուց բաղկացած մի վարչութիւն, որոնք իրենց մէջ բաժանելու են նախագահութեան, գանձապահութեան, քարտուղարութեան և ուրիշ պաշտօններ։

ը. Ընդհանուր և վարչական ժողովների պաշտօնավարները ընտրուում են երկու տարի ժամանակով։

թ. Ընտրուած վարչութեան պարտականութիւնն

է աշխատել ներկայացումները դարձնել պարբերական և կանոնաւոր, հոգալ բեմական անհրաժեշտ պարագաները— պիեսներ, զգեստներ, աթոռներ և այլն և բաժանել դերերը։

ժ. Վարչութեան որոշումները թէ դերեր և թէ պաշտօններ որոշելու գործում պարտաւորեցուցիչ են ամենքի համար։

ժա. Զուտ արդիւնքի տասներորդ մասը իբրև անձեռնմխելի գումար մնալու է թատերասիրաց դրամարկղում։

ժբ. Ներկայացումներից գոյացած զուտ արդիւնքի տասներորդ մասը ապահովելուց յետոյ, խումբը պարտական է մնացած գումարի կէս մասը յանձնել Ազգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձութեան, իսկ մնացած կէսը մնալու է թատերասիրաց խմբի դրամարկղում։

ժգ. Թատերասիրաց դրամարկղում մնացած գումարից խումբը պարտաւոր է ըստ իւր հայեցողութեան նպաստներ հասցնել տեղական ազգային բարեգործական ընկերութիւններին։

ժդ. Թատերասիրաց խմբին անդամակցել ցանկացողները պարտաւոր են մի տարի ծառայել նոյն խմբում իբրև օժանդակ ոյժ, որից յետոյ կընդունուեն անդամ, եթէ ընդհանուր ժողովը յարմար դատէ։

ժե. Ընկերութեան անդամներից ոչ ոք բացի խմբի նախաձեռնութեամբ տրուած նեկայացումներից, իրաւունք չունի ուրիշ ներկայացումների մասնակցել, կամ ներկայացումներ տալ։ Բացի աշակերտական ներկայացումներից և մանկական երեկոյթներից, որոնց եկամուտներն էլ պէտք է կիսուին ըստ ժբ. կանոնադրութեան։

ժզ. Թատերասիրաց խումբը քայքայուած դէպքում, ընկերութեան բոլոր իրերը և դրամն մնալու են Ազգ. երկսեռ դպրոցներին։

Ընկերութիւնը ունենում է իր վարչական մարմինը բաղկացած հետևեալ անդամներից։

Նախագահ՝ պ. Մկր. Կարապետեան
Քարտուղար՝ » Տիգրան Թ. Աբգարեանց
Գանձապահ՝ » Ներսէս Տէր Գ. Տէր Յարութիւնեան
Խորհրդատու՝ » Յար. Յորդանանեանց
» » Մկրտիչ Ս. Յարութիւնեան
» » Սարգիս Մ. Սարգսեան։

Վարչութեան առաջին գործն է լինում աշխատել մի քանի օրիորդների բեմ դուրս բերել և մի անգամ ընդ միշտ վերջ տալ տղաներին կանացի զգեստներով դեր կատարելու նախկին տգեղ սովորութեանը։ Ծագում է ահագին աղմուկ, հանդէս են գալիս մութ ոյժեր, տեղում են անցեանզօր հայհոյանք ու սպառնալիք։ Վերջապէս խնդիրը հասնում է Հոգևոր Իշխանութեան։ Թեմական առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոսը դիմում է Ս. Էջմիածին, որպէսզի այնտեղից շնորհուած հրահանգի համաձայն ընթանայ։ Վեհ. Խրիմեանից ստացւում է այսպիսի մի պատասխան, որ եթէ ներկայացուելիք պիեսները հակակրօնական բնոյթ չեն կրել, թոյլատրուի կանանց սեռին ևս մասնակցելու։

Մինչ այս, մինչ այն, վարչութիւնը ոչ մի ջանք ու աշխատանք չը խնայելով և ոչ մի դժուարութեան ու սպառնալիքի առաջ կանգ չառնելով, յաջողում է համոզել օր. Ովսաննա Սիմէօնեանին, օր. Ծաղիկ Մինասեանին և օր. Լուսաբեր Տէր Յակովբեանին, որոնք բարոյական քաջութիւն են ունենում, հակառակ փողոցային զանազան պատգամներին ու նկատողութիւններին, բեմ դուրս գալ և Նոր-Զուղայի Ազգ. Թատրոնի անդրանիկ դերասանուհիները դառնալ։

Ներկայացուելու էր Սունդուկեանցի «Պէպօն» արարատեան աշխարհաբարի վերածուած։ Վարչութիւնը Շուշանի, Կէկէլի և Էփէմիայի դերերը յանձնելով վերոյիշեալ օրիորդներին, միւս դերերն ևս անմիջապէս բաժանում է

և սկսում փորձերը։

Սակայն այսքանով դեռ չի վերջանում խնդիրը։ Այժմ սկսածը չշխանգարուելու համար հարկաւոր է լինում թախանձել օրիորդների ծնողներին ու ազգականներին, սպասնալ ցուցարարներին, ձեռք բերել ազդեցիկ մարդկանց միջնորդութիւնը, փորձի գիշերները անձամբ գնալ հրաւիրել թաղապետին որպէս վկայ, կուլիսների ետևում նստեցնել մայրերին և ի լրումն ամենայնի, ներկայացման գիշերը Կառավարութիւնից ֆառաշներ բերել ապահովութեան համար։ Իսկ այս բոլորը միմիայն այն պատճառով, որ պէտք է երեք օրիորդներ բեմ դուրս գային, պէտք է խաղացուէր «Պէպօն»։

Անշուշտ, հիմա որ բեմի վրայ երևում են մի խումբ սիրող դերասանուհիներ, ծիծաղելի կը թուայ վերոյիշեալ պատմութիւնը, սակայն իրողութիւն է և այսօրուան մեր տեսածը մի դափնեայ պսակ է, որին Նոր—Ջուղայի Թատրոնը արժանացել է բազմաթիւ խոչընդոտների յաղթութեամբ դիմադրելուց յետոյ։

Իգական սեռից բեմ բարձրացնելու հետ միասին, վարչութիւնը յաջողեցնում և առաջին անգամ ներկայացնում է նաև մի պարսկերէն վոդրվիլ, մի ձեռնարկ, որ դեռ երկրորդը չի ունեցել մինչև օրս։

Յետոյ, որպէսզի վարչութիւնը ապագայում տրուելիք ներկայացումներին որոշ չափով պակաս աթոռներ մուրալու հարկադրուի, հանգանակութիւն է բաց անում և գոյացած գումարից պատրաստում վերապահեալ և առաջին կարգերի համար տասն հատ բազմոցներ։

Մի քանի ներկայացումներից յետոյ, սաւնութիւն ծագելով անդամների մէջ, ընկերութիւնը հետզհետէ քայքայւում է։

1900 թուի Օգոստոսի 12-ին վերակազմուում է Թատերասիրաց Ընկերութիւնը և դրուում Ս.զգ. երկսեռ դպրոցների Հոգաբարձութեան հովանաւորութեան ներքոյ, հետևեալ ուրթն պայմաններով։

ա. Ընկերութիւնը պարտաւոր է առաջին տարին 50, իսկ յետոյ 100 թուման յանձնել Ս.զգ. երկսեռ դպրոցներին։

բ. Ներկայացումներից գոյացած զուտ արդիւնքից դպրոցներին խոստացուած տուրքը վճարելուց յետոյ, մնացածը պարտաւոր է ընդհանուր ժողովի որոշմամբ յատկացնել այս կամ այն ազգային—բարեգործական հաստատութեան։

գ. Ընկերութիւնը ունենալու է հինգ հոգուց բաղկացած մի գործադիր Յանձնաժողով։

դ. Պիեսի ընտրութիւնը լինում է Հոգաբարձութեան հաճութեամբ և վաւերացմամբ։

ե. Յանձնաժողովին է թողնուած տոմսակների գների որոշումը։

զ. Տոմսակ և յայտարարութիւն տպագրելու, վաճառելու, ինչպէս և բուֆէտի, հիւրընկալների և այլն կարգադրութիւնը լինում է Յանձնաժողովի և Հոգաբարձութեան խառն ժողովով։

է. Նոր անդամի ընդունելութիւնը կատարուում է Հոգաբարձութեան միջոցով և Յանձնաժողովի որոշմամբ։

ը. Սոյն կանոններին խափան հանդիսացող անդամը արտաքսուում է ընկերութիւնից։

Յանձնաժողովի անդամներ են ընտրուում.

Նախագահ՝ պ. Գ. Պապեան
Քարտուղար՝ » Տիգրան Թ. Ս.ըգարեանց
Գանձապահ՝ » Ներսէս Տէր Գ. Տէր Յարութիւնեան
Խորհրդատու՝ { » Մկր. Կարապետեան
» Ս. Մ. Սարգիս։

Այս շրջանի ներկայացումներին իրենց շնորհալի խաղերով առանձին զարկ են տալիս Նոր—Զուզալի Թատրոնին Պապեան ամուսինները, որոնց հեռանալովն էլ խումբը ցրւում է։

Այնուհետև մի առ ժամանակ Թատրոնը իր գոյութիւնը պահպանում է Ուսուցչական խմբի նախաձեռնութեամբ տրուած ներկայացումներով։ Սրանց մէջ առաջին տեղն է բռնում Կանանց Բարեգործական Ընկերութեան օգտին տրուած «Ուզան» ի ներկայացումը, որի առթիւ նոյն ընկերութիւնը բաւականաչափ զգեստների հետ միասին նուիրում է բեմին և 30 թուման արժողութեամբ մի վարագոյր։

1905 թ. Դեկտ. 19-ին երկրորդ անգամ վերակազմ-ուում է Թատերասիրաց Ընկերութիւնը հետևեալ 15 յոդ-ուածներից բաղկացած կանոնադրութեամբ։

ա. Թատերասիրաց Ընկերութեան նպատակն է պարբերական ներկայացումներով բարոյապէս և նիւ-թապէս նպաստել Նոր—Զուղայի բարեգործական ըն-կերութիւններին։

բ. Թատ. Ընկ. բաղկացած է լինում դերասանական և երաժշտական խմբերից։

գ. Թատ. Ընկ. պէտք է հոգայ բեմի զարգացման և երաժշտական գործիքներ աւելացնելու մասին։

դ. Թատ. Ընկ. ունենում է վեց հոգուց բաղկացած մի վարչական մարմին—նախագահ, քարտուղար, գան-ձապահ և երեք խորհրդատու անդամներ։

ե. Թատ. Ընկ. բացի վարչական մարմնից, ունենում է մի ռէժիսօր, մի խմբապետ (երաժշտ.) մի յուշարար և մի հանդերձապահ։

զ. Պաշտօնավարութիւնը տևելու է մէկ տարի։

է. Թատ. Ընկ. իրաւունք ունի տարեկան երկու ներկայացում տալ յօգուտ բեմին։

ը. Բարեգործական ընկերութիւնների և խմբերի համար տրուած ամեն մի ներկայացման և եբեկոյթի զուտ հասոյթից 15% յատկացրուում է յօգուտ Թատ. Ընկ։

թ. Թատ. Ընկ. իրաւունք չունի առանց յարգելի պատճառի մերժել որևէ խմբի կամ ընկերութեան ներ-կայացում տալու ցանկութիւնը։

ժ. Ամեն մի խումբ կամ ընկերութիւն պէտք է մի ներկայացումից տասն օր յետոյ յայտնէ Թատ. Ընկ. վարչութեանը՝ իր ցանկութիւնը մի որևէ ներ-կայացում տալու։

ժա. Պիեսի ընտրութիւնը, ինչպէս և ներկայացման իսկական օրուայ որոշումը թողնւում է Թատ. Ընկ։

ժբ. Թատ. Ընկ. վարչութիւնը 20 թումանից աւելի ծախսելու դէպքում, պէտք է յայտնէ Թատ. Ընկերութեան ընդհանուր ժողովին։

ժգ. Բացի դերասան — դերասանուհիներից և երաժշտասէրներից, միւս անդամ-անդամուհիների մուտքը տոմսակով է լինելու։

ժդ. Թատ. Ընկ. անդամների թիւը չի սահմանափակւում։

ժե. Թատ. Ընկ. կանոնադրութիւնը փոփոխելի է։

Վարչական մարմինը կազմւում է այսպէս.

Նախագահ՝	պ.	Արմենակ Յարութիւնեան
Քարտուղար՝	»	Տիգրան Թ. Աբգարեանց
Գանձապահ՝	»	Նիկոլա Պետրոսեան
Խորհրդատու՝	»	Մկր. Կարապետեան
	»	Կ. Աբեանց
	»	Պօղոս Մ. Շուքուրեանց։

Սոյն վարչութիւնն իր պաշտօնավարութեան ընթացքում ընդարձակում և վերանորոգում է բեմը շարժական սեղաններով և նոր կուլիսներով։

Ի նկատի ունենալով թատրոնի սեպհական աթոռ նստարանների պակասութիւնը և այդ պատճառով ծագած անվերջ դժգոհութիւններն ու անախորժութիւնները, պատրաստում է 50 հատ նոր աթոռներ։

Երաժշտական խումբը մի պատշաճ տեղում նուագելու և դերակատարներին չխանգարելու համար, ծածկում է բեմի առաստաղը (որ մինչև այդ ժամանակը կտորներով էր ծածկւում), որով մի կողմից երաժշտական խմբին է դիւրութիւն տրւում՝ առանձին տեղ յատկացնելով, իսկ միւս կողմից դերակատարների ձայնը ցրուելու առաջն որոշ չափով առնւում։

Աչքի առաջ ունենալով տեղի սակաւութիւնը և ապագայում օթեակներ պատրաստելու անհրաժեշտութիւնը, բեմի յանդիմանի կողմում աւելացնում է մի երկրորդ վերնայարկ։

Յիշեալ ծախքերը թեթևացնելու նպատակով դիմում է հանգանակութեան և հաւաքում է 104 թումանաչափ մի գումար։

Վարչութեան գանձապահ պ. Նիկոլա Պետրոսեանը նկարել է տալիս և նուիրում Թատրոնին գեղարուեստական մի իւղաներկ վարագոյր։

Այս շրջանի ներկայացումները ղեկավարում է պ. Արմենակ Յարութիւնեանը։

1907 թ. Փետր. 15-ին ընդհանուր ժողովով փոփոխութեան է ենթարկուում թէ ընկերութեան կանոնադրութիւնը և թէ վարչութեան կազմը։

Մշակուում է հետևեալ 12 յօդուածներից բաղկացած կանոնադրութիւնը։

ա. Նոր-Զուղայի Թատերասիրաց Ընկերութեան նպատակն է պարբերական ներկայացումներով բարոյապէս և նիւթապէս նպաստել Նոր-Զուղայի բարեգործական և կրթական հաստատութիւններին։

բ. Թատերասիրաց Ընկ. ունենում է իր դերասանական և երաժշտական խմբերը։

գ. Թատ. Ընկ. պէտք է հոգայ բեմի զարգացման և երաժշտական գործիքներ աւելացնելու մասին։

դ. Թատ. Ընկ. ունենում է ութն հոգուց բաղկացած մի վարչական մարմին։

ե. Թատ. Ընկ. բացի վարչական մարմնից, ունենում է մի ռէժիսօր, մի խմբապետ (երաժշտ.), մի յուշարար և մի հանդերձապահ։

զ. Թատ. Ընկ. վարչութիւնը պարտքով գործ կատարելու իրաւունք չունի։

է. Բացի դերասաններից և երաժշտական խմբի անդամներից, միւս անդամ-անդամուհիների մուտքը տոմսակով է լինելու։

ը. Թատ. Ընկ. անդամների թիւը չի սահմանափակուում։

թ. Ռէժիսօրի և պիեսի ընտրութիւնը, ներկայացման ժամանակը, ինչ հաստատութեան համար ներկայացում տալը, ներկայացման արդիւնքի պէս-պէս գործադրութիւնը, ինչպէս և այն բոլորը որ վերաբերում է Թատրոնին, թողնել միանգամայն վարչութեան տրամադրութեան և բարեհայեցողութեան։

ժ. Թատ. Ընկ. պիտի մնայ զուտ արդիւնք 5%։

ժա. Թատ. Ընկ. իւրաքանչիւր անդամը պիտի տարեկան 3 ղուան նպաստ տայ ընկերութեան։

Ժբ. Թատ. Ընկ. Նոր անդամ գրաւողները պէտք է դիմեն վարչութեան։

Վարչութեան անդամներ են ընտրուում.

Նախագահ՝ պ. Ներսէս Տէր Յարութիւնեան
Քարտուղար՝ » Տիգրան Թ. Աբգարեանց
Գանձապահ՝ » Նիկոլա Պետրոսեան
Ծախսարար՝ » Պօղոս Մ. Շուքուրեանց
Խորհրդատու՝ » Յար. Յորդանանեանց
» Նսայի Արզումանեանց
» Հ. Տէր Պ. Յակովբեանեանց
» Կ. Աբեանց։

Սոյն վարչութիւնը իր երկրորդ նիստում կայացնում է այսպիսի մի որոշում. «Փոխանակ զանազան խմբերի և հաստատութիւնների օգտին ներկայացումներ տալու, այսուհետև տարուին միմիայն յանուն Թատերասիրաց ընկերութեան, իսկ տարուայ վերջը տոկոսի վերածելով հաւաքուած զուտ արդիւնքը բաժանել հետևեալ ձևով։

Անձեռնմխելի գումար Թատ. Ընկ. . 5%
Բեմի օգտին 20%
Ազգ. երկսեռ դպրոցներին . . . 20%
Կանանց Բարեգործական Ընկ. . . 20%
Հայկական Հարցին 20%
Ս. Կատարինեան ազգ. Որբանոցին . 10%
Բաֆֆի ընթերցարանին . . . 10%

Ծանօթ. Անձեռնմխելի 5% պէտք է համարուի որպէս ծախք»։

Այս ծրագրով էլ ընթանում է մի առ ժամանակ, մինչև որ Նոր—Զուղայում ծագած մի ներքին պառակտման պատճառով՝ վարչութիւնը կազմալուծուում է և Թատերական գործը կանգ առնում։

1907 թ. Հոկտեմբերի 5-ին պարոնայք Արմենակ Ցարութիւնեան, Արամ Յովսէփեան, Տրդատ Աբգարեանց, Յովսէփխան Ղարախանեան և Պօղոս Շուքուրեան ընդհանուր ժողովով ընտրուում են նոր վարչութիւն, սակայն տիրող անախորժ դրութեան շնորհիւ՝ սրանց ևս չի յաջողւում մի գործ անել։ Իսկ երբեմնակի ներկայացումներ տրւում են Աւստրիական խմբի նախաձեռնութեամբ։

1908 թ. Մայիսի 29-ին Նոր—Զուղայի Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի 50-ամեայ յոբելեանի առթիւ դպրոցական կազմը տ. Մ. Աղանուրի մասնակցութեամբ տալիս է առաջին կոնսերտը և յաջորդ գիշերը ներկայացնում Սումբատովի «Դաւաճանութիւն» յայտնի դրաման, որ իր ճոխ պատրաստութեան կողմից Նոր—Զուղայում մինչ օրս տրուած ներկայացումների ամենաշքեղն կարելի է համարել։

Ս. Կատ. Օրիորդաց դպրոցի յոբելեանի առթիւ կազմակերպւում է Նոր—Ջուղայում «Գրական-Կրթական» անունով մի ընկերութիւն, որի նպատակն է լինում նպաստել Ջուղայի և Պարսկաստանի հայաբնակ գիւղերի լուսաւորութեան գործին։

Ընկերութիւնն իր նիւթական միջոցների զարգացման համեմատ՝ ի միջի այլոց նպաստում է նաև Նոր—Ջուղայի Թատերական գործին և կազմակերպում ներկայացումներ։ Քայքայուած Թատերասիրաց Ընկերութիւնն ևս ձուլւում է սոյն Գրական-Կրթ. Ընկերութեան հետ։

Թատերական—Երաժշտական գործն աւելի հաստատուն հիմքերի վրայ դնելու և պարբերական ներկայացումներին աւելի կանոնաւոր ընթացք տալու նպատակով, Գրակ. Կրթ. Ընկ. վարչութիւնը իր միջից ընտրում է պարոնայք Հ. Տէր Պ. Յակովբջանեանցին, Տիգրան Թ. Աբգարեանցին, Արմենակ Յարութիւնեանին և Մկր. Կարապետեանին, որպէս մասնախումբ թատերական գործի։

Ներկայացումներին, բուֆէտի գործը մի անգամ ընդ միշտ դնում է Կանանց Բարեգործական Ընկերութեան տրամադրութեան ներքոյ և եկամուտը բոլորովին թողնում նրան։ց, որպէս մի կողմից նպաստ նոյն ընկերութեան, իսկ միւս կողմից փոխադարձ աջակցութիւն այն բանի համար, որ Կանանց ընկ. վարչութիւնը ևս աշխատի միշտ դերասանուհիներ գտնել ներկայացման գործը գլուխ բերելու։

Ամեն մի ներկայացման զանազան դերասանուհիներին աղաչանք-պաղատանքով դեր տալու զգուելի սովորութեանն վերջ տալու նպատակով, Գրական-Կրթ. ընկ. մասնակցող և օժանդակող տիկիններից և օրիորդներից մի ժողով է գումարում և ընտրում օր. Վարդուհի Խաչիկեանին, օր. Իշ-

խանուհի Զօհրաբեանին, օր. Դատրիկ Դաւթեանին և օր. Ծովինար Վարդանեանին, որպէս օժանդակ մասնախումբ Թատերական գործի ընդհանրապէս և դերասանուհիների մասին հոգացող մասնաւորապէս։

1910 թուին. քայքայւում է Գրական-Կրթական Ընկերութիւնը և այնուհետև ներկայացումները գլուխ են բերւում զանազան ընկերութիւնների և խմբերի նախաձեռնութեամբ։

Այս շրջանում, բացի ներկայացումներից, տրւում են նաև պարերեկոյթներ և աւելի յաճախ կոնսերտներ, վերջիններիս մէջ իր ջութակի նուագով աչքի է ընկնում պ. Արմ. Գերասիմեան։

Նոր—Զուղայի բեմի վրայ սկզբից սինչեւ մեր օրերը խաղացուել են հետեւեալ պիեսներ։

—(1888—1913)—

Ազգային-Ընտանեական Դրամա.

№

1 — Մեծն Ներսէս
2 — Տաճկական խոստմունք
3 — Շուշանիկ
4 — Արշակ Բ. — Նարպէյի
5 — Նուիրական սիրոյ զոհեր } Մկր. Կարապետեանի
6 — Ծնողասէր որդիք } Մկր. Կարապետեանի
7 — Սասունի կոտորածը } Մկր. Կարապետեանի
8 — Արայ գեղեցիկ
9 — Պէպո — Սունդուկեանի
10 — Ժընէվիէվ — փոխադր. Մկր. Կարապետեանի
11 — Սև հողեր — Դուրեանի
12 — Ասլան Բալասի — Աբովեանի
13 — Թագի համար — Ֆր. Կոպպէի
14 — Ռուզան — Մուրացանի
15 — Էլի մէկ զոհ — Սունդուկեանի
16 — Պատուի համար — Շիրվանզադէի
17 — Անիի աւերումը — Դուրեանի
18 — Փուչ զաւակ — Ղարաջեանի
19 — Ոճրագործի ընտանիքը
20 — Վենետկի վաճառականը — Շէքսպիրի (անգլ. լեզուով)
21 — Դաւաճանութիւն — Սումբատովի
22 — Խայտ — Վ. Փափազեանի
23 — Վերանոյածը — Լ. Մանուէլեանի
24 — Մարդու ճրագներ — Աբէլեանի
25 — Եւգինէ — Շիրվանզադէի

26 — Պատիւ — Զուդերմանի
27 — Ռոբերտ Մայկեր — թարգմ. Մկր. Կարապետեանի
28 — Աւերակների վրայ — Շիրվանզադէի
29 — Արմենուհի — Շիրվանզադէի։

Կոտորիչ-ներ և վրէժիր.

№
1 — Խէչոյի թուզը
2 — Շտապ տագնապի — Թ. Տէր Ստեփաննոսեանի
3 — Կըռթ-կըռթ
4 — Երկու բարեկամ
5 — Դժգոհ ամուսիններ — Յովսէփ Ղազարեանի
6 — Պանդոկապետը (անգլ. լեզուով)
7 — Հաջի Արգօլ-Նաբի — Յար. Յորդանանեանի (պարս. լեզուով)
8 — 200,000 — Փառնակէսի
9 — Սփսոս իմ Ղօնաղլուզս («Վայ քի իմ վէյէր»)
10 — Մեծապատիւ մուրացկաններ — Պարոնեանի
11 — Մադոյի կտակը — Է. Տէր-Դրիգորեանի
12 — Բռնի ամուսնութիւն — Մոլիէրի
13 — Գասպար ամի
14 — Մոդա
15 — Ոգետեսութիւն
16 — Դոքտոր Թաթոս — Շչեդլովի
17 — Բարբուէլի նախանձը — Մոլիէրի
18 — Մկնիկ
19 — Սէրը բժիշկ — Մոլիէրի — թարգմ. Դր. Զօրաբեանի
20 — Խոլէր — Յար. Թումանեանի
21 — Երևակայական հիւանդը — Մոլիէրի
22 — Փաստաբանի մօտ — Տէր-Դաւթեանի
23 — Ադամն ու Եւան — Վրոյլի

24 — Վայրենի
25 — Էս էլ քեզ երկու հարիւր հազար
26 — Պընչ և Ջիւդի — (անգլ. լեզուով)
27 — Արևելեան ատամնաբոյժ — Պարոնեանի
28 — Շառլատանը — Շիրվանզադէի
29 — Կեղծ բժիշկ — Ֆիլդինգի (անգլ. լեզուով)
30 — Առաջարկութիւն — Չեխովի
31 — Սօնայի նշանդրէքը
32 — Կանացի ցանցառութիւն — Շչեգլովի։

Ծանօթ.

ա) Մանկական թատերախաղերը չեն յիշուած ցուցակի մէջ որպէս պիեսներ։

բ.) Յիշուած պիեսներից մեծ մասը մէկ կամ երկու անգամ կրկնուել են. այնպէս որ Նոր—Զուզայի Ազգ. Թատրոնում 25 տարուայ ընթացքում տրուել են ընդամենը 94 ներկայացումներ։

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Թատրոնի սկզբնաւորութեան հետ միասին հիմք է դրւում և Երաժշտութեան։ 1880-ական թուականների ներկայացումներին, երբեմն բերել են տալիս Կառավարութեան երաժշտախումբը միջարարնեբին նուագելու։ Անյայտ դէպքում բեմի առաջը դնում են մի Musical-box և լարում նուագելու։

1897 թուին ուսուցիչ պ. Մկրտում Կարապետեանը հաւաքում է մի խումբ աշակերտներ և սովորեցնում նրանց բերանի սուլոցով երաժշտութեան եղանակներ հանել, որի հետ միացնելով թմբուկ, ծնծղաներ ու զանգակ, դուրս է բերում երաժշտութեան մի նմանողութիւն — imitation։ Անծանօթների համար այս կեղծիքը երկար ժամանակ մնում է որպէս հանելուկ, որովհետև բեմի վրայ վարագոյրի ետևում է նուագւում և հեռուից նուագւող երաժշտութեան ձայնի նմանւում։

Ձայնը մի աստիճան զօրեղացնելու համար, խմբի ղեկավարը պապիրոսի թղթեր է դնել տալիս սանրերի վրայ և շրթունքներին դէմ պահելով սուլել տալիս։ Հետզհետէ աւելացնում է նաև մի «սանթուր» և մի «քօնսէրտինա»։ Այսպիսով Թատրոնը ունենում է կեղծ երաժիշտների մի մշտական խումբ և մի միջոց հէնց այսպէս էլ կառավարւում։

1899 թուին Գերմանացի պ. Էմիլ Հելդզբրը (մօր կողմից հայ և ծնուած Նոր-Ջուղայում), որ բաւական յաջող ջութակահար էր և Ազգ. Թատրոնի համակրողներից մէկը, հաւաքելով իր շուրջը մի խումբ սիրողներ, կազմում է «String-band» անունով ջութակահարների մի խումբ,

որի գործիքները Թատերասիրաց ընկերութիւնից հոգալով, իսկ ղեկավարութիւնը, ինչպէս և սովորեցնելու ամբողջ հոգսն իր վրայ վերցնելով, կարճ միջոցում պատրաստում է այնպիսի մի խումբ, որ կարողանում է այնուհետև տրուած ներկայացումներին իր ղեկավարութեամբ նուագելով, մինչ իսկ Եւրոպացի հանդիսականներին զարմանք պատճառել։ պ. Հելդզբի Եւրոպա գնալովը քայքայւում է և խումբը։

1906 թուին վերակազմւում է պ. Մկր. Կարապետեանի խումբը և այս անգամ՝ նուագարաններով։ Նախկին գործիքներին աւելացրւում են թաւ, երգեհոն, ջութակ և ֆլէյտա։ Այս խումբը նախկինի հետ համեմատած, անշուշտ յառաջադիմական մի մեծ քայլ էր արուած։

1907 թուին պ. Բարսեղ Տէր Գ. Բազիլը Եւրոպայից բերել է տալիս երկու կօրնէտ և երկու քլարիօնէտ և նուիրում վերոյիշեալ խմբին։

1908 թուին պ. Յորդանան Տէր-Կ. Յորդանանեանցը Ջաւայի Սօէրաբայա քաղաքում գտնուող Նոր—Զուղայեցիների շրջանում հանգանակութիւն բաց անելով, հաւաքում և ուղարկում է 14 անգլ. պօնդաչափ մի գումար, որով անմիջապէս բերել են տալիս մի քանի նոր գործիքներ և ճոխացնում խումբը։

Նոյն նպատակով, Նոր—Զուղայում ևս խմբապետ պ. Մկր. Կարապետեանի ձեռքով 50 թումանաչափ գումար է հանգանակւում և գործիքներ աւելացրւում։ Օգնում է և Գրական—Կրթական ընկերութիւնը։

Նոր գործիքների շնորհիւ բարենորոգւում է խումբը, սակայն սիրողների մեծամասնութեան անվերջ կապրիզների պատճառով գործը միշտ կաղում է։

1909 թուին Ազգ. երկսեռ դպրոցների Մանկավարժական Խորհրդի որոշմամբ ու կարգադրութեամբ Երաժշտութիւնը մտցրւում է դպրոցի առարկաների թւում և նոր սիրողներ հաւաքւում բացառապէս Ազգ. Կեդրոնական դպրոցի աշակերտներից։

1912 թուին պարոնայք Մայիլ և Մարտիրոս Ս. Եսայեանները 250 թուման և Դր. Ռանդոլֆը 10 թուման են նուիրում Երաժշտական խմբին։ Սոյն գումարներով բերել են տրուում մի քանի նոր գործիքներ և ճոխացնում խումբը։

Այսպէս Նոր—Զուղայի Ս.զգ. Թատրոնի Երաժշտութեան գործը ինչպէս մի մանուկ դողդոջուն քայլերով սկսելով իր կեանքը, ժամանակի ընթացքում կամաց կամաց աճում, բարգաւաճում է և հաստատուն հիմքերի վրայ դրուում, կազմուում է փողաւոր գործիքների վրայ նուագող այժմեան կանոնաւոր և մշտական երաժշտախումբը, որ բոլոր ներկայացումներին և դպրոցական ու ազգային հանդէսներին նուագում է և հետզհետէ աւելի ու աւելի կատարելագործուում։



ՅՈՒԲԵԼԵԱՆ

Ներկայ թուականի Մարտի 10-ին պ. Մայիլ Ս. Եսայեանի և պ. Արմ. Գերասիմեանի նախաձեռնութեամբ և հրաւէրով Գ. Քանանեան դպրոցի դահլիճում գումարուում է Նոր—Զուղայի բնակիչ այս կամ այն ձևով մասնակցողներից բաղկացած մի ժողով, տօնելու Նոր—Զուղայի Ազգ. Թատրոնի 25-ամեայ յոբելեանը։

Կարգադիր յանձնաժողովի անդամներ են ընտրուում պ. Մայիլ Ս. Եսայեան, պ. Արմ. Գերասիմեան, պ. Աբմենակ Յարութիւնեան, պ. Մկր. Կարապետեան, պ. Տիգրան Թ. Աբգարեանց, պ. Յովհաննէս Տէր-Կիւրեղեան, պ. Ալեքսան Աբրահամեան և պ. Սամուէլ Նահապետեան։

Կարգադիր Յանձնաժողովն իր նիստերում որոշում է.

1) — Տպագրուած կոչով հրաւէր կարդալ ամեն կողմ գտնուող Նոր—Զուղայեցիներին ընդհանրապէս և Թատրոնին մասնակցողներին մասնաւորապէս, յորդորելով նրանց մասնակցելու իրենց ծննդավայրի այս համեստ յոբելեանին։

2) — Յոբելենական հանդէսը ըստ կարելւոյն շքեղ տօնելու համար, Զուղայում դիմել հանգանակութեան։

3) — Հնդկաստանի նշանաւոր քաղաքներում գործակալներ նշանակել և նրանց միջոցով հանգանակութիւն կատարել այնտեղ։

4) — Եթէ նիւթական միջոցները ներեն, աշխատել կառուցանելու մի առանձին թատերական շէնք, և ազատել Ազգ. Կեդր. դպրոցը մի շարք անյարմարութիւններից։

5) — Յոբելենական հանդէսը կատարել երկու գիշեր, առաջին գիշերը ունենալով գրական—երգեցողական—երաժշտական մասը, իսկ երկրորդ գիշերը ներկայացում։

6) — Պատրաստել Ազգ. Թատրոնի սոյն փոքրիկ պատմութիւնը և տպագրելով՝ յոբելեանի օրը ձրիապէս ցրել հասարակութեան։

Տօնում ենք Նոր—Զուղայի Ազգային Թատրոնի 25-ամեայ յոբելեանը, հասարակութեան մտաւոր զարգացման և գեղարուեստի ծաղկման յոբելեանը։ Տօնում ենք այն ամբիոնի գոյութեան յոբելեանը, որտեղից մի քառորդ դար, կարճատև ընդմիջումներով, միշտ քարոզուել է բարուոյ և գեղեցկի գաղափարը։ Սակայն ցաւօք սրտի պէտք է նկատել, որ Թատրոնը Զուղայում դեռ իր կոչման համապատասխան բարձրութեան վրայ չէ կանգնած, դեռ ոչ իր կրթիչ նշանակութիւնն է ձեռք բերել և ոչ էլ ժողովրդի համար պահանջ դարձել։ Մխիթարականն այն է, որ ունի իր մնայուն և հաստատուն բեմը Ազգ. Կեդրոնական դպրոցի դահլիճում, սեպհական ամ/ռ-նստարանները, բեմական անհրաժեշտ իրերը և երաժշտական խումբը։

ՅՈՒԲԵԼԵԱՆԻ

ԱՌԹԻՒ

ԲԱՑԱՌԻՈՒՄ Է ՉՐԻ